



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 46842 14, 03 2017թ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության անմիջական ղեկավարումն իրականացնելու նպատակով, հիմք ընդունելով ԵՊՀ կանոնադրության 60-րդ կետի դրույթները և ղեկավարվելով կանոնադրության 56-րդ կետի 11-րդ ենթակետով.

հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Սահմանել, որ ԵՊՀ ներքոհիշյալ կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց գործունեությունն իրականացնում են ԵՊՀ ռեկտորի անմիջական ղեկավարությամբ.

- ա) ֆակուլտետներ, Ինստիտուտներ,
- բ) Իջևանի մասնաճյուղ,
- գ) Հաշվապահություն,
- դ) Գնումների պլանավորման և պահեստավորման վարչություն,
- ե) Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գիտական գրադարան,
- զ) Իրավաբանական բաժին,
- է) Ընդհանուր բաժին,
- ը) Կադրերի բաժին,
- թ) Հատուկ բաժին,
- ժ) Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության շտաբ,
- ժա) Արխիվ,
- ժբ) Հյուրերի տուն,
- ժգ) Երևանի պետական համալսարանի կողմից հիմնադրված տնտեսական ընկերություններ:

2. ԵՊՀ ներքոհիշյալ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության անմիջական ղեկավարումը հանձնարարել.

2.1. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝

- ա) Ուսումնամեթոդական վարչություն,
- բ) Հետրուսական լրացուցիչ կրթության վարչություն,
- գ) Մինչհամալսարանական կրթության վարչություն,
- դ) Որակի ապահովման կենտրոն,
- ե) Կրթական ծրագրեր իրականացնող կենտրոններ,
- զ) Համահամալսարանական ամբիոններ:

2.2. Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորին՝

- ա) Միջազգային համագործակցության վարչություն,
- բ) Գիտական քաղաքականության վարչություն,
- գ) Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժին,
- դ) Գիտական ստորաբաժանումներ և կենտրոններ,
- ե) Ռուսական կենտրոն,
- զ) Գիտական հանդեսներ:

2.3. Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին՝

- ա) Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն,
- բ) Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն,
- գ) Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն,
- դ) Շրջանավարտների և կարիերայի կենտրոն,
- ե) Մշակույթի կենտրոն,
- զ) Ձեռներեցության զարգացման կենտրոն,
- է) Պատմության թանգարան:

2.4. Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին՝

- ա) Տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման բաժին,
- բ) Էլեկտրաէներգիայի շահագործման բաժին,
- գ) Հակահրդեհային ծառայություն,
- դ) Ուսումնաարտադրական բազաներ և ուսումնափորձնական տնտեսություն,
- ե) Ավտոպարկ,
- զ) Կաթսայատուն,
- է) Արհեստանոցներ,
- ը) Տարածքի բարեկարգման և կանաչապատման բաժին,
- թ) Բուժկետ և ատամնաբուժարան:

3. Լիազորել.

3.1. ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.1. կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու (բացառությամբ աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժերի ենթակելու հարցերի), այդ թվում՝ ուսանողների նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու, նրանց նույն կուրսում թողնելու, համալսարանից հեռացնելու և ուսումնական պրոցեսին անմիջապես առնչվող այլ հարցեր լուծելու նպատակով արձակելու համապատասխան հրամաններ:

3.2. ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.2. կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու (բացառությամբ աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժերի ենթակելու հարցերի) նպատակով արձակելու համապատասխան հրամաններ:

3.3. ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.3. կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու (բացառությամբ աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժերի

ենթակելու հարցերի), այդ թվում ուսանողների ներհամալսարանական հասարականան մասնակցությունը խրախուսելու նպատակով արձակելու համապատասխան հրամաններ:


3.4. ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.4. կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու (բացառությամբ աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժերի ենթակելու հարցերի) նպատակով արձակելու համապատասխան հրամաններ:

4. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի ռեկտորի 2014 թվականի հունիսի 12-ի թիվ 106Տ30 հրամանը:

5. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ



Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ